և ժողովուրդն յուսահատած գայթակղում է. ապա եթէ այնպիսի գայթակղեցուցիչ պատճառներից ստիպուած եկեղեցի յաճախելից դադարի, ով է մեղաւորը. անտարակոյս եկեղեցական պաշտօնեայք, և գլխաւորապէս քահանայք, որոնք այնպիսի անկարգութեանց դէմ առնելու անփոյթ են լինում:

Զ.

Ուրեմն ժողովրդեան սրտերը դէպ ի ջերմեռանդութիւն շարժող, յեկեղեցին յաճախելու միակ միջոցն է՝ քաղցրաձայն դպրաց ներդաշնակ երգասացութիւնը, մանաւանդ պատարագի սրբարար խորհուրդի ժամանակը՝ երբ որ խիստ յարմար եղանակով երգեն թէ դպիրներ և թէ սարկաւագներ, ինչպէս որ տեսած ենք մեր Հայաստանեայց բարեկարգ եկեղեցիներումը, ուր երգվում են խիստ վայելուչ և սրտաշարժ կերպով թէ շարականներ, և թէ պատարագի սրբարար խորհուրդի միջոցումը քաղցրանուագ եղանակներ, շարժում են ունկնդիր ժողովրդոց սրտերը ի ջերմեռանդութիւն աղօթից, որոնք հետևաբար յաճախում են յեկեղեցին ամեն ժամանակ, մխիթարվելով հոգևորապէս, մանաւանդ եկեղեցական հանդիսաւոր օրերումը, զի ժողովրդոց այնքան ազդեցութիւն չի ներգործել եկեղեցւոյ հոյակապ շինուածքը և միջի թանկագին և շքեղ զարդերը՝ որքան երգիչների քաղցրանուագ երգասացութիւնը:

Է.

Ապա թող աշխատի ամեն մէկ քաղաքի կամ գիւղի Հայ ժողովուրդն իւր եկեղեցին զարդարել, ոչ թէ լոկ նիւթական զարդերով, այլ և քաղցրաձայն ախրոյցներով և մանուկներով պատրաստել տալով իւրաքանչիւր ազգային ուսումնարաններումը և ծխական դպրոցներումը, ինչպէս որ մեր սուրբ Թարգմանիչները ընտրում էին այնպիսի երկարաշունչ Հայ մանուկներ յատկապէս եկեղեցեաց մէջ երգելու, և վերջապէս քահանայ դառնալու համար: Ահա այժմեան մեր Վեհափառ Գէորգ Դ. Ամենայնագոյն Հայրապետի խիկ սրտի բաղձանքն է եկեղեցեաց պայծառութեան համար պատրաստել արժանաւոր եկեղեցականներ, որոնցմով զարդարել մեր Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին, ի փառս Ամենասուրբ Երրորդութեան:

ՄԵՍՐՈՎԲ ՔԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆՑ.

Վ. Աշ——լէ——.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՉԷՆՔ ԿԱՄ ՉԻՆԱՑԻՔ.

Չէնք կամ Չինացիք, որպէս և Արեւելեան Ասիայի ազգաց մեծ մասն կպատկանին դեղնագոյն ցեղին. նոքա հասակաւ բաւական մեծ են: Նոցա դէմքը լայն է և քառակուսի, այտերը դուրս ցցուած, ճակատը բաց, աչքերը գլխոյն համեմատ մի կողմի վրայ երկայն ձգուած, քիթը փոքր, որոյ սկիզբն է տափակ, բերանը միջակ, ականջները խիստ լայն: Մօրուքի կողմից նոքա աղքատ են, մանաւանդ հարաւային նահանգներու բնակիչքը: Նոցա մազերն են սև, և խիտ: Երեսի գոյնը թուխ պայ-

ծառ. երկրագործներու, և արհեստաւորներու և մշակաց գոյնը խիստ մուգ է. յաջող մարդկանցը առաւել պայծառ և երբեմն ծաղկափթիթ:

Յարգանք և համարումն ստանալու համար հարկաւոր է լինել պարարտ և թանձրամարմին, այնպէս որ մեծաւ դժուարութեամբ հնար լինի լցնելու մի բաւական լայն բազկաթոռ: Ըստ ենթադատութեանց Չինաց՝ մարդոյ տաղանդը և մեծութիւնը կախումն ունի նորա գիրութենէն: Պատուոյ հասանելոյ մի այլ միջոցն ևս է աջ ձեռքի երկայն եղունգներ թողնելը, մանաւանդ թէ ճկոյթինը, որով կապացուցուի թէ նոցա մէջ անգործադրելի է ձեռակերտ արուեստք կենաց պիտոյից համար: Ոմանք արտաքոյ կարգի երկայն եղունգներ կթողնեն, վեց բթաչափէն սկսեալ մինչև մի ոտնաչափը (ФУТЪ): Կանանց աչքերը ձգուած են նեղ և երկայն, քիթը վեր ցցուած՝ բայց ոչ այնքան երկայն: Սակայն նոցա բերանն է փոքր և կարմրափայլ, կազմուածքը բաւական նուրբ: Նոցանից ոմանք գեղեցիկ են և խիստ վայելչագէմ: Ամենամատաղ հասակէն սկսեալ նոքա ամենքը կըսնգուրեն իւրեանց դէմքը. նոքա կըբարձրացնեն դէպ ի վեր՝ այն է՝ դէպ ի գագաթը՝ իւրեանց սև փայլուն և ի միասին յօդուած մազերը, լցնելով մեծ մեծ արուեստական ծաղկանց փունջերով: Երկու երկայն ասեղ, արծաթեայ, պղնձեայ կամ երկաթեայ, ըստ հանգամանաց գործածութեան, կը հաստատեն միմեանց խաչանիշ և խոտորնակ նոցա գլխի վերայ: Նոքա կսևացնեն իւրեանց յօնքերը սև գոյնով, և կգծագրեն ստորին շրթունքէն վայր՝ կզակի ծայրին վերայ մի վարդակարմիր և խիստ փայլուն շրջանակ, մի կնքանշանի (облотка) մեծութեամբ: Կանանց սնգոյրի չափազանց գործածութիւնը կարտադրէ իւր սովորական արդիւնքը. նորանով մորթը կայրուի:

Չինաց կանանց՝ Եւրոպացւոց աչքին՝ տարօրինակ երևցող պատճառներէն մինն է նոցա յողդողդ ընթացքը, որ առաջացած է նոցա ոտքերու անվայելչութենէն: Կանանց ոտքը նոյն իսկ ծննդեան օրէն սկսեալ կ'փաթթեն ամուր երիզօք, որոնք ճնշելով և ձմլելով, բաց ի բոյթը, կարգելեն նոցա աճումը, որով ոտքի երկայնութիւնը չորս բթաչափէն (ДЮЙМЪ) առաւել չէ անցներ, իսկ լայնութիւնը մի բթաչափէն: Այն կինը՝ որոյ ոտքը այսօրինակ հաշմեցուցած չէ՝ խիստ արհամարհուած է:

Չէնք՝ Թաթարաց Մանչուր ցեղի իշխանութեան տակ ընկնելէն զկնի կ'սափրեն իւրեանց գլուխը, վերին մասում միայն պահպանելով փունջ վարսից (քեանքիւլ), որ ազատօրէն երկարելով՝ բաւական ձիգ աղիի ձև կ'ստանայ:

Մեծաւ մասամբ Եւրոպացի ճանապարհորդք կմիաբանին Չինաց բարուց մեծամեծ գովեստներ չընծայելու: Բայց և այնպէս նոքա սոյն ժողովրդոց պակասութիւնքը կ'վերագրեն նորա տէրութեան կառավարչական ձևոյն և ուղղութեան: Չէնք են քաղցրաբարոյ, մարդասէր, խաղաղասէր և ամօթխած: Նոցա ընկերական հանգամանքը պատճառել է նոցա լինելու անտարբեր, անզգայ և մինչև անգամ դաժան: Նոքա շահախնդիր են և դիւրամէտ խաբելոյ: Ի վերին երեսս խոհականութեան

և վայելչութեան նոքա կարող են պատրուակել իւրեանց հակամէտութիւնը դէպ ի զեղխութիւն և զբօսանք։ Զինք իւրեանց խոնարհական խօսակցութեամբ, քաղցր և սրատաւուչ անկեղծութեամբ, կդիմակաւորեն քինախնդիր բնաւորութեան արտաքին սառնութիւնը *)։ Նոքա իւրեանց զգացմանց մէջ կայանեն սակաւ վսեմութիւն և փափկութիւն։ Թէպէտ մի կողմից ունին յարգանք դէպ ի ննջեցեալք, սակայն միւս կողմէն չունին մեծ մարդասիրութիւն առ կենդանիս։ Մի իրողութիւն, որով նոքա միանգամայն կրհեռանան արատաւորութեան անունէ՝ է արբեցութիւնն։

Կայսրը կվարէ լիակատար իրաւամբ։ Ան նա ունեցած մեծարանքն կհասանէ մինչ ի ծայր երկրպագութեան. նորան անհրնազանդ գտնուիլը է աններելի յանցանք. նա սակաւ կցուցանէ զինքն ժողովրդոց, բայց այսպիսի հանգամանաց մէջ՝ նա կշրջապատուի ամենաերևելի շքեղութեամբ, մարդիկ իւրեանց երեսներու վերայ դէպ ի գետին կթաւալին նորա անցանելու միջոցին։ Նա կկոչուի որդի երկնից և միակ կառավար աշխարհի։

(*) Ցաւոք սրտի հարկ է նկատել՝ որ ոչն իակ բնաւորութեամբ շատեր կան ոչ միայն Զինաց մէջ՝ այլ և մեր մէջ անգամ, ուրեմն թող սոյնպիսի անհատներ, կամ լաւ ևս ասել՝ մահատիպ ցեցեր մարդկութեան՝ բարեհաճին միանգամայն ի բաց խղելոյ իւրեանց երեսէն կեղծուպատիր, ցուցամոլ, խմատակ և փքեալ սոփեստականութեան դատապարտելի դիմակը, դէթ անմեղ հոգիք դէպ ի կուրատ չվարելոյ համար ընդանալով մարդկութեան ճանապարհով։ Ծան. Թարգ.

Ամենայն ինչ ի Զինաստան անփոփոխելի օրինաց կենթարկուի, մինչև անգամ երկու հաւասար անձանց մէջ եղած սովորութիւնքն որոշեալ է օրինօք։ Նորա բոլոր կիսերը կարի ինն ճշգրութեամբ կըպահպանուին։ Հասարակաց միմեանց ողջոյն տալն անգամ ունի իւր սահմանեալ ձևերը հաստատուած սովորութեանց ասեանով. ոչն ձևերից որ և իցէ մինն մոռացման և զանցաւորութեան տալն ո և իցէ մատնաւոր անձի կողմանէ՝ կհետևեցնէ գանահարութիւն (bastonnade). երբէ՛ ոչն յանցաւորն է որ և իցէ պաշտօնատար անձին՝ այն ժամանակ նա կձգուի իւր աստիճանէն, կամ կարգելուի իւր պաշտօնէն։

(Թարգ. ի Գազէթայէն)

ՋԱՀՆԱՄ ՀԱՂԱՐԵԱՆ.

Տ. ՖԷՔ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ ՀԱՅՈՑ.

(Անդրադարձ)

Մեր ազգն արդեօք ի՞նչ դիտաւորութիւն ունի։ Կամենո՞ւմ է արդեօք իւր մատաղաւուրց զաւակաց դաստիարակութիւն, և ի՞նչպէս է ցանկանում կրթել։ Մերազնեայ՝ ազգի համար ձրի ծառայողքն, անխոնջ և անվարձ մշակքն, զծանրութիւն աւուրն քրանաջան աշխատասիրութեամբ բարձող բեռնակիրքն, մեզուաց նման Գերմանիայի լայն մշակեալ անապատներէն, Գրանսիայի դալարաղուարձ դաշտերէն, Անգլիայի ծաղկալեր